Կարգապահական գործ թիվ ԿԳ-17059

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի 13 փետրվարի թիվ 23-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/16-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Հայրապետյանին (արտոնագիր՝ 159) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

11.07.2017թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Տ. Գրիգորյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 04.07.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում կամ Դատական սանկցիա)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 4-ին՝ ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանը չի ներկայացել, չնայած պատշաճ ձևով ծանուցված է եղել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Դատարանը որոշմամբ մեջբերել է նաև սույն քրեական գործով ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանի 30.06.2017թ. հայտարարությունն առ այն, որ Տիգրան Հայրապետյանը լիազորված չէ, առանց իր պաշտպանյալ Ժիրայր Սեֆիլյանի մասնակցության, մասնակցել դատական նիստի և ունի պաշտպանյալի հանձնարարությունն իր բացակայության ժամանակ չմասնակցել դատական նիստի,

ուստի՝ չկարողանալով իր պաշտպանյալի դիրքորոշմանը հակառակ դիրքորոշում ընդունել՝ դատական նիստից իր բացակայությունը խնդրել է չդիտել որպես նախագահող դատավորի կարգադրություններին չենթարկվելու հանգամանք:

Դատարանը, Որոշմամբ վկայակոչելով նշված փաստական հանգամանքները և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ ՔԴՕ**) 73-րդ հոդվածի 5-րդ մասը, 314.[1]-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ և 20-րդ հոդվածները, 21-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 3.1.6, 3.1.7, 3.5.1, 3.5.5 ենթակետերը և 4.1 կետը, գտել է, որ փաստաբան Տիգրան Հայրապետյանը չարամտորեն խուսափել է 04.07.2017թ.՝ ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին ներկայանալուց և առանց հարգելի պատճառի՝ չի կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու իր դատավարական պարտականությունը, ինչով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ: Դատարանը գտել է նաև, որ փաստաբանը չէր կարող ընդունել իր վստահորդի կողմից վկայակոչված հանձնարարությունը, քանի որ այն անօրինական է: Ավելին՝ փաստաբան Տիգրան Հայրապետյանը պարտավոր էր իր վստահորդին պարզաբանել հիշյալ հանձնարարության կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տալ արդյունքի հասնելու օրինական ճանապարհը, իսկ եթե չհաջողվեր վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա նա պարտավոր էր հրաժարվել վստահորդի հանձնարարությունն ընդունելուց: Բացի այդ, ընդունելով իր վստահորդի անօրինական հանձնարարությունը, փաստաբան Տիգրան Հայրապետյանը հաշվի չի առել նաև այն կատարելու իր մասնագիտական հնարավորությունները և անտեսել է, որ այն ընդունելու արդյունքում Կանոնագրքով ներկայացվող պահանջներն իր կողմից չեն կարող պահպանվել, ինչպես նաև կխախտվեն քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին ենթարկվելու և առանց նախագահողի թույլտվության՝ դատական նիստերի դահլիճը չլքելու իր քրեադատավարական պարտականությունները, ինչն անթույլատրելի է: Վստահորդի հանձնարարությունը կատարելու ընթացքում փաստաբանին չի թույլատրվում օգտվել օրենքով արգելված միջոցներից: Բացի այդ, փաստաբանն ունի դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին ենթարկվելու պարտականություն և պարտավոր է հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնկիցներին:

Դատարանը 04.07.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է *փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:*

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 01.08.2017թ. թիվ 217-Ա/ԿԳ-17059 որոշմամբ փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

04.08.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանող Տիգրան Հայրապետյանը ներկայացրել է բացատրություն, որի համաձայն՝ դատական սանկցիայի որոշման մեջ նշված այն հանգամանքը, որ դատավոր Տ. Գրիգորյանը դատավարության մասնակիցների հետ համաձայնեցրել է, որ դատական նիստերն անցկացվեն ամեն երեքշաբթի և ուրբաթ օրերին, չի համապատասխանում իրականությունը, քանի որ դատավորը նիստի օր չի համաձայնեցրել, այլ ուղղակի հայտարարել է, որ նիստերը տեղի կունենան այդ օրերին:

Պատասխանողն առաջին նիստին դիմել է դատավորին նշված հարցի վերաբերյալ կարծիք հայտնելու, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքների կապակցությամբ առարկություն ներկայացնելու համար, դատավորը հստակորեն խոստացել է իրեն ձայն տալ, սակայն ձայն չի տվել:

Պատասխանողը մատնանշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որը դատավորի համար հստակ պարտավորություն է սահմանում նիստի օրերն ու ժամերը համաձայնեցնել դատավարության մասնակիցների համար, մինչդեռ դատավորը խախտել է օրենքի այդ դրույթը և դատավարության մասնակիցների հետ դատական նիստերի օր և ժամ չի համաձայնեցրել: Ուստի՝ ըստ Պատասխանողի՝ խոսել այն մասին, որ ինքը պարտավոր էր ներկայանալ այդ օրվա նիստին, հիմնավոր չէ:

Պատասխանողը նշել է, որ անգամ եթե ինքն ստացած լիներ ծանուցագիրը, այնտեղ չի նշվում, որ ինքը կանչվում է դատական նիստին ներկա գտնվելու համար, հետևաբար ասել, որ ինքը չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի պահանջով, անհիմն է, քանի որ վարույթն իրականացնող մարմինը տվյալ դեպքում իրեն դատական նիստին չի կանչել: Ուստի՝ Պատասխանողի մոտ չէր կարող առաջանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտավորություն:

Դատական սանկցիա կիրառելու մասին որոշման մեջ Պատասխանողին մեղսագրվում է Ժիրայր Սեֆիլյանին պաշտպանելու պարտականությունը ոչ բարեխիղճ կատարելու վարքագիծ՝ այն համարելով դատարանի նկատմամբ անհարգալից

վերաբերմունք: Ըստ Պատասխանողի՝ եթե անգամ ինքը ոչ բարեխիղճ է կատարում իր պարտականությունները վստահորդի նկատմամբ, դա որևէ ձևով չի կարող դիտվել անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Պատասխանողի կարծիքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրիք 314.1 հոդվածի համաձայն՝ դատարանը սանկցիա կիրառում է, եթե անձը կատարում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք պարունակող գործողություններ, մինչդեռ, հենց դատավորի որոշումից է երևում, որ Պատասխանողի չներկայանալը կապված է իր պաշտպանյալի դիրքորոշման հետ, որի մասին Պատասխանողը դատարանին ներկայացրել է երկու ապացույց: Պատասխանողը նշել է, որ դատարան չներկայանալը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում չէ, այլ՝ իր պարտականությունը: Անգամ եթե ինքը սխալ է պատկերացնում իր պարտականությունը, միևնույն է, դա չի կարող իր կողմից դատարանին չհարգելու վերաբերմունք համարվել:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 և ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածները՝ Պատասխանողը պնդում է, որ դատարանը չէր կարող իր նկատմամբ դատական սանկցիա կիրառել, քանի որ ինքը դատական նիստին ներկա չի գտնվել:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածը՝ Պատասխանողը պնդել է, որ դատարանը խտրական վերաբերմունք է դրսևորել փաստաբանների նկատմամբ, քանի որ հուլիսի 4-ի նիստին ներկա չեն գտնվել նաև դատախազները, սակայն դատարանը նրանց մասով սանկցիա չի կիրառել:

Վկայաբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածը և ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածը՝ Պատասխանողը գտել է, որ դատական սանկցիա կարող է կիրառվել, եթե դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտվում է, իսկ իր չներկայանալը չի ազդել նիստի բնականոն ընթացքի վրա, քանի որ դատավորը հանգիստ շարունակել է դատական նիստը:

Պատասխանողը դատարանին մեղադրել է իր պաշտպանյալի իրավունքները խախտելու, նրա նկատմամբ նվաստացնող վերաբերմունք դրսևորելու մեջ:

Պատասխանողն ընդգծել է, որ եթե իր պաշտպանյալն իրեն չի լիազորել մասնակցել իր բացակայությամբ գործով հետագա վարույթին, ապա Պատասխանողի համար իր պաշտպանյալի նման դիրքորոշումը պարտադիր է:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

04.10.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն Պատասխանողի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 4-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի մասին ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան, փաստաբան Տիգրան Հայրապետյանը ծանուցված է եղել: Նախապատրաստողը հաստատված է նաև համարել, որ թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 4-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին Տիգրան Հայրապետյանը չի մասնակցել:

Պատասխանողը չի ներկայացրել առարկություն եզրակացության վերաբերյալ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 05.10.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս*:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Տիգրան Հայրապետյանը հանդիսանում է Ժիրայր Սեֆիլյանի պաշտպանը:
2. Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 30.06.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստում դատարանը որոշում է կայացրել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանին դատարանի նիստերի դահլիճից հեռացնելու մասին:
3. Փաստաբան Տիգրան Հայրապետյանի կողմից 30.06.2017թ. դատարան է ներկայացվել հայտարարություն առ այն, որ Տիգրան Հայրապետյանը լիազորված չէ, առանց իր պաշտպանյալ Ժիրայր Սեֆիլյանի մասնակցության, մասնակցել դատական նիստի և ունի պաշտպանյալի ուղղակի հանձնարարությունն իր բացակայության ժամանակ չմասնակցել դատական նիստին, ուստի՝ չկարողանալով իր պաշտպանյալի դիրքորոշմանը հակառակ դիրքորոշում ընդունել, դատական նիստից իր բացակայությունը խնդրել է չդիտել որպես նախագահող դատավորի կարգադրություններին չենթարկվելու հանգամանք: Բացի այդ ինքը հնարավորություն չի ունեցել նախագահող դատավարին

ներկայացնելու իր պաշտպանյալի դիրքորոշումը նիստերի դահլիճում նախագահող դատավորի կողմից մտնելու ժամանակ ոտքի չկանգնելու հետ կապված: Տիգրան Հայրապետյանը նշել է նաև, որ նիստերի դահլիճում ներկա գտնվելը և գործի լուծման հետ կապված նման կարևոր հարցերի վերաբերյալ դիրքորոշում չհայտնելը խախտում է իր կողմից իր պաշտպանյալին պաշտպանելու գործընթացը:

4. Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 4-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանը չի ներկայացել:
5. Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 4-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանը պատշաճ ծանուցված է եղել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Որոշմամբ, Պատասխանողի առարկություններով և կից ներկայացված ծանուցագրի պատճենով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Հայրապետյանը փաստաբան է հանդիսանում 21.09.2005թ-ից., և 2015-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 7 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (7 ընթացիկ վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Հայրապետյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ*

միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՔԴՕ-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝*

«(…)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն

(…)»:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե.

արդյո՞ք Պատասխանողն *առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ*:

Ըստ հաստատված փաստերի, թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 30.06.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստում դատարանը որոշում է կայացրել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանին դատարանի նիստերի դահլիճից հեռացնելու մասին: Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 4-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Տիգրան Հայրապետյանը չի ներկայացել: Դատական նիստին չներկայանալը (չմասնակցելը) Տիգրան Հայրապետյանը պատճառաբանել է այն հանգամանքով, որ իր պաշտպանյալի կողմից նման հանձնարարություն չունի: Բացի այդ ինքը հնարավորություն չի ունեցել նախագահող դատավորին ներկայացնելու իր պաշտպանյալի դիրքորոշումը նիստերի դահլիճում նախագահող դատավորի կողմից մտնելու ժամանակ ոտքի չկանգնելու հետ կապված: Պատասխանողը նշել է նաև, որ նիստերի դահլիճում ներկա գտնվելը և գործի լուծման հետ կապված նման կարևոր հարցերի վերաբերյալ դիրքորոշում չհայտնելը խախտում է իմ կողմից իր պաշտպանյալին պաշտպանելու գործընթացը:

Սույն կարգապահական գործում առկա ապացույցներով Պալատի Խորհուրդը հաստատված է համարում, որ 30.06.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստից հետո նշանակված դատական նիստերին Պատասխանողը չի ներկայացել և դրանով պայմանավորված հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր պաշտպանյալի դիրքորոշումը նախագահող դատավորին: Խորհուրդն արձանագրում է, որ 04.07.2017թ. դատական նիստին Պատասխանողը ծանուցված է եղել:

Պալատի խորհուրդը կարևոր է համարում սույն որոշմամբ տալ այն հարցի պատասխանը, թե՞ արդյոք դատական նիստին չմասնակցելու վստահորդի

հանձնարարությունը օրինական հանձնարարություն է, և արդյո՞ք փաստաբանը պարտավոր էր կատարել այդ հանձնարարությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ <u>օրենքով չարգելված բոլոր միջոցներով:</u>*

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ *«Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝*

1) այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում.

(…)»

Կանոնագրքի 3.1.6 ենթակետի համաձայն՝ *Եթե վստահորդի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա <u>փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:</u>*

Նշված կանոնների համակարգային վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ քրեական գործով պաշտպանն պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, հետևաբար օրենքով արգելվող այդպիսի վարքագիծ դրսևորելուն ուղղված վստահորդի հանձնարարությունն օրինական չի կարող լինել: Ոչ օրինական հանձնարարությունն ընդունելուց փաստաբանը պարտավոր է հրաժարվել: Փաստաբանն իրավունք չունի և չպետք է վստահորդից այնպիսի հանձնարարություն ընդունի, եթե ի սկզբանե այն հակասում է օրենքին կամ վարքագծի կանոններին:

Վստահորդի ոչ օրինական հանձնարարությունը փաստաբանի համար պարտադիր համարելու դեպքում, փաստաբանը կկորցնի իր անկախությունը և ստիպված կլինի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչն անթույլատրելի է:

Պալատի խորհուրդը եզրակացնում է, որ Պատասխանողի արարքը կատարված է դիտավորությամբ, այսինքն՝ վերջինս գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն Տիգրան Հայրապետյանն առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել, հետևաբար դիտավորությամբ այդպիսի վարքագիծ դրսևորելով խախտել է Կանոնագրքի 4.1 կետի պահանջը:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Պալատի խորհուրդը՝ հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը և փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ պետք է կիրառել տույժ՝ նկատողության ձևով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Հայրապետյանին (արտոնագիր՝ թիվ 159) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Հայրապետյանի (արտոնագիր՝ թիվ 159) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

13 փետրվարի 2018թ.
թիվ ԿԳ/16-Ա
ք. Երևան